Հանրագիր 29/25

Ներկայացվող պետական կամ տեղեկան ինքնակառավարման մարմինը

ՀՀ Ազգային ժողով

Պաշտոնատար անձի անունը և ազգանունը

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյան

Ոլորտ

Էկոնոմիկա

Հանրագրի վերնագիրը

Վե՛րացնել փոքր բիզնեսի համար սահմանված վատթարացնող հարկային փոփոխությունները՝ շրջանառության հարկի ռեժիմի դեֆորմացիան։ Չը՞նդունել երկրորդ ընթերցմամբ Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1 նախագիծը, որով ավելացվում է հաշվապահների և իրավաբանների հարկային բեռը։

Հանրագրով ներկայացվող առաջարկը

Ուժը կորցրած ճանաչել՝ 1. 2023թ-ի հոկտեմբերի 25-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-340-Ն օրենքը, 2. 2024թ-ի հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-285-Ն օրենքը, 3. Չհաստատել երկրորդ ընթերցմամբ ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1 նախագիծը

Հանրագրով ներկայացվող հիմնավորումը

ՀՀ կառավարության կողմից հեղինակած և ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված ՀՕ-340-Ն և ՀՕ-285-Ն օրենքները էականորեն բարդացրել են Հայաստանում գործող գերփոքր բիզնեսների հարկերի հաշվառումը, դրանցով խստացվել են գերփոքր բիզնեսի նկատմամբ կիրառվելիք հարկային վարչարարությունը։ Խախտվել է մինչ այդ գործող և աշխարհում հայտնի գերփոքր բիզնեսների համար նախատեսված շրջանառության հարկի ռեժիմի գաղափարախոսությունը՝ պարզություն, կանխատեսելիություն, արդարություն։ Դրան գումարվում է նաև այս օրերին ՀՀ կառավարության կողմից հեղինակած և արդեն ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ հաստատված Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1 նախագիծը, որով էականորոն ավելանում է գերփոքր բիզնեսին սպասարկող հաշվապահական և իրավաբանական ծառայությունների արժեքը (հաշվի առնելով, որ այդ նախագծով հաշվապահական և իրավաբանական ծառայությունները դուրս է թողնվում շրջանառության հարկի ռեժիմից և տեղափոխվում ընդհանուր հարկման (ԱԱՀ-ի) դաշտ)։

Կից նյութեր

Հանրագրի գլխավոր նախաձեռնող՝

ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա ՀԿ

Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/3, 703

Էլ. փոստ՝ info@sme.am

Հեռախոսահամար՝ +37443477000

Digitally signed by AVAGYAN HAKOB 3912770166
Date: 2025.03.25 22:00:47 AMT